ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

30.07.2018թ.

ՀՀ Տարածքային կառավարման եւ զարգացման

նախարար Սուրեն Պապիկյանին

336-ի5

# Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պապիկյան

Արագած լեռան փեշին գտնվող Քարե լճի ափին կառուցած ռեստորաններից մեկը զավթել է լճի ափը բառիս բուն իմաստով՝ պարսպապատելով 200-300 մետր ափ՝ չթողնելով այցելած մարդկանց՝ ներառյալ տուրսիտներին, մոտենալ լճի ափին: Խնդրում եմ տրամադրել հետեւյալ տեղեկատվությունը.

1. Արդյո՞ք օրինական է հանրային նման կարեւորության, տուրիստական ամենաայցելվող վայրում՝ Արագած լեռան ստորոտին իրականացնել մասնավոր պարսպապատում:
2. Ունի՞ արդյոք տվյալ ռեստորանային կառույցը տարածքը պարսպապատելու համապատասխան թույլտվություն: եթե այո, խնդրում ենք տրամադրել դրա պատճեն:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և ,Տեղեկատվության ազատության մասինե ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տրամադրել վերոնշյալ տեղեկությունները.
«Տեղեկատվության ազատության մասինե ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ
Շուշան Դոյդոյան